

# ՏԻՐՈՒՄՆԻ

## Հ Ա Ն Գ Ի Ս

**ՀԱՅԿԱՆՈՒԾ ՄԱՅՐԱՊԵՏ ԵՐԱՄՄԵԱՆԻ**  
(1886 — 1966)

**Ս. Աթոռու վիշտն ունեցաւ կորսիցնելու իր երկարատևայ վաստակաւոր մայրապետներէն՝ Հայկանուշը Մայրապետ Երամմեանը:** Ծնած է Աստրաբար, եւ Բիթանիոյ գաւառին պարզումով, Կ'ապաստանի կ. Պոլիի եւ բարերար ձէվահիրճեան գերդաստանին հետ 1921-ին կու գայ Սուրբ Քաղաք եւ կը բնակի իրենց հետ Ս. Աթոռու մէջ: 1922 Յունիս 23-ին խնդրամատուց կը լայ Ս. Աթոռու Պատ. Տնօրքն ժողովին՝ մայրապետաց շարք մտնելու համար, եւ կ'ընդունուի ամիս մը վերջ:

**Հայկանուշը Մայրապետ Երամմեան եղած է իր երկարատեւ կեանքին մէջ այսատունակ, համեստ եւ երկիւղած բարեպաշտումի մայրապետ մը, անա խոնջ եւ անտրոտունջ կատարած իր պարապականութիւնը խղճի մտօք մինչեւ իր մահը, որ տեղի ունեցաւ 9 Օդաս. 1966-ին: Յուղարկուորութիւնը կատարեցաւ Ս. Հրեշտակապետաց Եկեղեցոյ Զարյարանաց խորանին առնել, նուխագահութեամբ Ս. Աթոռու Լուսարարապետ Գերք. Տ. Հայրիկ Ս. Արքապատի բովանդակ Միարանութեան եւ ուսանողութեան մասնակցութեամբ:**

**Մարմինը ամփոփուեցաւ Զամ Թաղի պուրակ-գերեզմանատան մէջ:**

Հանդիսաւ իր հոգուոյն:

## Հ Ա Ն Գ Ի Ս

**ՄԱՐԴԻՍ ՀԱԶԱՐԱՊԵՏԵՑԵԱՆԻ**  
(1896 — 1966)

**Մարդիս Հաղարապետան ծնած է Գոնիս, 1896-ին, կեսարացի ծնող-քէ, մօրը կողմէ թոռը ըլլալով թալասցի բարեհամբաւ. եւ բարեգործ Համի Կարապետ Աղա Խուլքէսէրեանի:**

Իր ուսումը առած է Գոնիսայի Փրանսական վարժարանին մէջ եւ 1915-ին կ'աքսորուի ծնողքին հետ Քիլիս-Հալէպ:

Զինադադարէն վերը կը վերադառնայ Աստման եւ կը պաշտօնայարէ Փրանսական հոգատար կառավարութեան մօտ:

Կիլիկիոյ պարպումէն յետոյ կ'անցնի Սուրբա եւ կը շարունակէ իր պաշտօնչ Փրանսական կառավարութեան մէջ, եւ հուսկ՝ կը փոխազրուի Բայեաք եւ կը հաստատուի Լիբանան:

Ֆրանսայի Լիբանանը պարպէէն յետոյ, ժամանակ մը կը պաշտօնա-վարէ Ազումէի Աղջային Բուժարանին մէջ: 1959-ին կու գայ Երուսաղէմ եւ իբրեւ Հայերէն արձանագրութեան քարտուղար կ'առնուի Ս. Աթոռոյ Դի-ամատան մէջ, ուր, խցիք մտօք եւ ճշգապահութեամբ կը ծառայէ մինչեւ իր մահը, որ տեղի ունեցաւ քաղաքին Փրանսական Հիւանդանոցին մէջ, 6 Օդաս. 1966-ին: Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ նոյն օրը, եւ մարմինը ամփոփուեցաւ Զամ Թաղի պուրակ-գերեզմանատունը:

Հանդիսաւ իր հոգուոյն: